



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«23» 08 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 413-Ա

«ՉԱՐԼԻ ԷՅՐԼԱՅՆԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ («ՍԱՅՓՐՈՒՄ ԷՅՐՎԵՅՍ») ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Չարլի Էյրլայնս» ՍՊ ընկերության («Սայփրուա Էյրվեյս») 2022 թվականի օգոստոսի 1-ի գրությունը և 2022 թվականի օգոստոսի 11-ի և 17-ի հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Չարլի Էյրլայնս» ՍՊ ընկերությանը («Սայփրուա Էյրվեյս») (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լաոնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լաոնակա/LCLK/ երթուղով՝ 2022 թվականի օգոստոսի 30-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 25-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ և 2022 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2023 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային և ձմեռային ժամանակահատվածներում՝ 2022 թվականի

օգոստոսի 3-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 28-ը և 2022 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2023 թվականի մարտի 24՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և 2022 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ Ընկերության կողմից դիմումի ներկայացման օրվա՝ 2022 օգոստոսի 1-ի դրությամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին՝ Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Սահմանել, որ սույն հրամանի երկրորդ կետով նշված արտոնության տրամադրման սկիզբը 2022 թվականի օգոստոսի 24-ն է՝ ամիսների նվազման կարգով:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

 Восстановимая подпись

X 

ՍԻՄՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Подписано: ASATRYAN SIMON 3811700103

